600.0153.08.06.16

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ու Մ

8 հունիսի 2016 թվականի №153Ա

քաղ. Երևան

### 3-ՐԴ ԿԱՐԳԻ ՍԻՐՈՂԱԿԱՆ ՌԱԴԻՈՕՊԵՐԱՏՈՐ ԱՐՏԱՇԵՍ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ ՍԻՐՈՂԱԿԱՆ ՌԱԴԻՈՕՊԵՐԱՏՈՐՆԵՐԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՐՈՒՅԹՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «գ» ենթակետը, 21-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2009 թվականի օգոստոսի 26-ի «Սիրողական ռադիոօպերատորների թույլտվությունների դասակարգման և տրամադրման, սիրողական ռադիոկայանների գրանցման, տեղադրման և օգտագործման կանոններն ու որակավորման չափանիշներին սիրողական ռադիոօպերատորների համապատասխանությունն ստուգելու կարգը հաստատելու մասին» №527Ն որոշումը և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ռադիոսպորտի ֆեդերացիայի 2016 թվականի մայիսի 17-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Բավարարել 3-րդ կարգի սիրողական ռադիոօպերատոր Արտաշես Թադևոսյանի հայտը և տրամադրել սիրողական ռադիոօպերատորներին հատկացված ռադիոհաճախականությունների տիրույթների օգտագործման թույլտվություն՝ 10 տարի գործողության ժամկետով:
2. 3-րդ կարգի սիրողական ռադիոօպերատոր Արտաշես Թադևոսյանին արտոնել օգտագործելու EK6RAP ազդականչը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ** **Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ**

ք. Երևան
8 հունիսի 2016 թ.
ժամը $16^{00}$